Հավելված
ՀՀ կառավարության 2025 թվականի
նոյեմբերի 27-ի N 1704-Ն որոշման

Պ Ա Յ Մ Ա Ն Ն Ե Ր
ԱՎԻԱՏՈՄՄԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

1. Սույն պայմաններով կարգավորվում են «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա», «գ», «դ», «ե», «զ» և «է» պարբերություններով նախատեսված պատվիրատուների (այսուհետ՝ պատվիրատուներ) կողմից ավիատոմսերի ձեռքբերման հետ կապված հարաբերությունները:

2. Պատվիրատուներն ավիատոմսերի ձեռքբերումն իրականացնում են հետևյալ եղանակներով՝

1) անհատական ավիատոմսերի ձեռքբերում իրականացվում է ավիափոխադրողների պաշտոնական կայքերից կամ միջազգային որոնողական և ամրագրման էլեկտրոնային հարթակներից.

2) խմբակային ավիատոմսերի ձեռքբերում իրականացվում է՝ անմիջականորեն ավիափոխադրողին դիմելով՝ համաձայն տվյալ ավիափոխադրողի ներքին ընթացակարգերի, կամ Հայաստանի Հանրապետությունում գործող ավիափոխադրողի պաշտոնական ներկայացուցչի միջոցով՝ գնումները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Սույն պայմանների իմաստով խմբակային ավիատոմսի ձեռքբերում է համարվում 10 (տասը) և ավելի ուղևորի համար նույն ուղղությամբ և նույն ժամկետով ավիատոմսերի գնումը, իսկ անհատական ավիատոմսի ձեռքբերում է համարվում մինչև 9 (ինն) ուղևորների համար նույն ուղղությամբ և նույն ժամկետով ավիատոմսերի գնումը:

4. Պատվիրատուները միջազգային որոնողական և ամրագրման էլեկտրոնային հարթակներից ավիատոմսեր ձեռք բերելու դեպքում կարող են օգտվել բացառապես հետևյալ հարթակներից՝

1) «Թրիպ.կոմ» (Trip.com, trip.com).

2) «Էքսպեդիա» (Expedia, expedia.com).

3) «Սքայսկաններ» (Skyscanner, skyscanner.net).

4) «Բուքինգ.կոմ Ֆլայթս» (Booking.com Flights, booking.com).

5) «Փրայսլայն» (Priceline, priceline.com).

6) «Քիվի.կոմ» (Kiwi.com, kiwi.com).

7) «Գուգլ Ֆլայթս» (Google Flights, google.com/flights).

8) «Քայակ» (Kayak, kayak.com):

5. Ավիափոխադրողների պաշտոնական կայքերից և միջազգային որոնողական և ամրագրման էլեկտրոնային հարթակներից կատարվող ավիատոմսերի ձեռքբերման դեպքում կատարվող ծախսերի համար նախատեսված գումարները շրջանառվում են պատվիրատուի բանկային վճարային քարտերի միջոցով:

6. Ավիատոմսերից օգտվելու պայմանները, ինչպես նաև օգտվելու իրավունք ունեցող անձանց ցանկը՝ ըստ ավիատոմսերի դասերի, հաստատվում է պատվիրատուի ղեկավարի (պետական կառավարման մարմնի դեպքում՝ մարմնի ղեկավարի) կողմից՝ անհատական իրավական ակտով:

7. Ավիատոմսի ընտրության դեպքում պատվիրատուներն առաջնորդվում են տնտեսապես առավել շահավետ տարբերակի սկզբունքով՝ համեմատելով նույն ուղղությամբ և օրվա առկա բոլոր գնառաջարկները՝ հաշվի առնելով ավիատոմսի ընդհանուր արժեքը: Սույն պայմաններում «ավիատոմսի ընդհանուր արժեք» է համարվում սակագինը՝ ներառյալ բոլոր կիրառելի հարկերը, տուրքերը, այլ պարտադիր վճարները (ներառյալ՝ միջնորդավճարները, սպասարկման վճարները), ավիատոմսի դասի, ուղեբեռի, պարտադիր նստատեղի ընտրության կամ այլ ծառայությունների վճարները, տարանցիկ կանգառների քանակն ու տևողությունը:

8. Համեմատությունը կատարվում է ավիափոխադրողների պաշտոնական կայքերում և սույն պայմաններով թույլատրելի ոչ պակաս, քան 2 (երկու) միջազգային որոնողական և ամրագրման էլեկտրոնային հարթակներում առկա գնառաջարկների հիման վրա:

9. Տնտեսապես առավել շահավետ տարբերակի ընտրությունը կատարվում է հետևյալ չափանիշներով՝

1) ավիատոմսերը ձեռք են բերվում հիմնականում «Էկոնոմ» դասով: Բարձր դասի («Բիզնես» կամ ավելի բարձր) ավիատոմսերի ձեռքբերում թույլատրվում է բացառապես այն դեպքերում, երբ դա պայմանավորված է ծառայողական անհրաժեշտությամբ կամ գործուղման ժամկետի և ժամանակացույցի պահանջներով կամ անվտանգության նկատառումներով.

2) ավիատոմսի ընտրության դեպքում ուղիղ և տարանցիկ չվերթերի միջև առաջնահերթությունը որոշվում է հետևյալ սկզբունքներով՝

ա. եթե տարանցիկ չվերթի ընդհանուր արժեքը նույն ուղղությամբ և օրվա ուղիղ չվերթի արժեքից ցածր է առնվազն 50 (հիսուն) տոկոսով կամ եթե տարանցիկ կանգառի տևողությունը չի գերազանցում 4 (չորս) ժամը կամ այն պակաս է 1 (մեկ) ժամ 30 (երեսուն) րոպեից, ապա առաջնահերթությունը տրվում է տարանցիկ տարբերակին,

բ. եթե տարանցիկ չվերթի արժեքը նույն ուղղությամբ և օրվա ուղիղ չվերթի արժեքից բարձր է, ապա առաջնահերթությունը տրվում է ուղիղ չվերթին,

գ. եթե տվյալ ուղղությամբ նույն օրվա ընթացքում ուղիղ չվերթ հասանելի չէ, ապա համեմատությունը կատարվում է միայն տարանցիկ տարբերակների միջև: Տարանցիկ տարբերակների համեմատության դեպքում առաջնահերթությունը տրվում է այն չվերթին, որն ունի ամենակարճ ընդհանուր ճանապարհի տևողությունը և առավել քիչ տարանցիկ կանգառները: Ընդ որում, առավելագույնը թույլատրվում է մինչև երկու տարանցիկ կանգառ: Երկու տարանցիկ կանգառից ավելի չվերթերի ընտրությունը թույլատրվում է միայն այն դեպքում, երբ տվյալ ուղղությամբ նույն օրվա ընթացքում այլ տարբերակ հասանելի չէ,

դ. եթե առավել էժան ավիատոմսերի տարբերակները պահանջում են տարանցիկ վիզա, ապա առաջնահերթությունը տրվում է հաջորդ նվազագույն արժեք ունեցող՝ վիզա չպահանջող տարբերակին.

3) եթե ընտրված ավիատոմսը չի ներառում գրանցված ուղեբեռ, ապա թույլատրվում է ձեռք բերել ավիատոմս, որը ներառում է մեկ կտոր գրանցված

ուղեբեռ, իսկ ցածր սակագնային ավիափոխադրողների կողմից իրականացվող չվերթերի դեպքում՝ նաև ձեռքի ուղեբեռ.

4) վճարովի նստատեղի ընտրությունը թույլատրվում է միայն այն դեպքերում, երբ այն պարտադիր է ավիափոխադրողի կողմից ամրագրման ավարտման համար կամ հիմնավորված է ծառայողական անհրաժեշտությամբ՝ մասնավորապես միասին գործուղվող անձանց միասին նստեցման կամ երկարատև չվերթերի դեպքում գործնական պայմանների ապահովման նպատակով: Գործուղվող անձանց անձնական նախապատվության հիմքով նստատեղերի ընտրությունը չի թույլատրվում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ տարբերակը փաստացի չի հանգեցնում ավիատոմսի ընդհանուր արժեքի բարձրացման՝ համեմատած առանց նստատեղի տարբերակի հետ:

10. Պատվիրատուն պարտավոր է պահպանել այն հիմնավորող փաստաթղթերը և տվյալները, որոնք ապացուցում են, որ ավիատոմսի ընտրությունը կատարվել է սույն պայմանների պահանջներին համապատասխան:

11. Պատվիրատուն յուրաքանչյուր ամիս՝ մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 5-րդ աշխատանքային օրը, procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակում է տեղեկատվություն՝ ձեռք բերված ավիատոմսերի դասերի, ուղղությունների, քանակի, ձեռքբերման գների և ավիատոմսը տրամադրած միավորի վերաբերյալ, բացառությամբ այն դեպքերի, երբ տվյալ տեղեկատվությունը պարունակում է պետական գաղտնիք կամ սահմանափակ տարածման ծառայողական տեղեկություններ, կամ երբ դրա հրապարակումը կարող է վնաս հասցնել Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությանը կամ շահերին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

28.11.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ